

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշկարիոյ համար տար-
 կան 10 ֆրանկ : Վերա-
 ստանալու համար տարկան 12
 ֆրանկ, վեցամսեայ 6 ֆր.
 ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԵԼԻ
 Գրութիւնք եւ յին տրուի :
 Իրանուցիական տող 20 սան-
 րիւն է :

ՇԱԲԱԹ

Կանալիէ զրաւ զրկեչ
 Խմբագրութեան հասցիին .

Редация на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна.

Redaction du journal
 „Charjoum“
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵԲՇԱԲԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԱՆԴՈՐՐԱՑՈՒՄ

Սկիզբէն ի վեր, և մանաւանդ
 վերջին աղէտալի դէպքերուն վը-
 րայ, մեր ազգին գրեթէ բոլոր
 տարրերուն մէջ ձգտում մը կե-
 րեւնայ միաբերը յուզուած,
 տարտամ, թունալից պահելու :

Կրօնաւոր, թափառական հո-
 վիւ, թաղական, հոգաբարձու,
 պարզ անհատ, գործի մարդ,
 կարծես ամէնքը խօսք մէկ բրած
 են միշտ ներքին շփոթութիւն-
 ներ առաջ բերելու և կըզայրա-
 սպան կոխենքու մէջ սպառնալու
 այն թանկագին ուժերը որոնք
 պէտք էին գործածուիլ հասա-
 ռակաց թշնամիին դէմ :

Շատ քիչերը կը կարծեն թէ
 այս ազգը այսքան փորձութիւն-
 ներէ և ալէկոծումէ ետքը, ինք-
 նամիտիման, լուրջ գիտակցու-
 թեան պէտք ունի ազգին իրա-
 կան կարիքը յստակ աչքով տես-
 նելու, և նոր ուժերով պատրաս-
 տուելու կեանքի և գոյութեան
 պայքարը անվրէպ առաջ մղելու
 համար :

Այն անհատը որ միամտօրէն
 կը նպատակէ իրերու այս կացու-
 թեան յաւերժանալուն, տխուր
 մըն է պարզապէս. իսկ ան որ
 գիտակցաբար կընէ նոյն բանը,
 դաւաճան մը :

Ինչպէս ամէն ազգերու, մեր
 ազգին մէջ ալ գոյութիւն ունին
 կարգ մը արարածներ, ամենէն
 վտանգաւորները, որոնք կտոր
 մը թուղթ և ժանգոտ գրեւ մը
 բռնած յարախնդի շարաշաք գոր-
 ծը կը կատարեն մեր ընկերու-
 թեան մէջ : Գէպքերու կը սպասեն,
 դէպքեր կը յերկուրեն զայլակ-
 ղալից, որպէս զի անոնց տիղմին
 մէջէն որոճան իրենց նողկալի
 ապրուստը :

Ներքին խնդիրներ ունինք,
 կուսակցական այլ և այլ հաշիւ-
 ներ զորս ժամ առաջ կարգադրել
 պէտք ենք մեր կեանքի պահանջ-
 ման համեմատ, որպէս զի ընդ-
 հանուր հանդարտութեան և միա-
 քերու յստակութեան մէջտեղ
 յեղափոխութեան գործը անսայ-
 թաք, անարգել զարգանայ, ա-
 ռաջանայ և յաջողութեամբ պը-

սակուի. և սակայն կերեւայ թէ
 դժուարաւ պիտի յաջողինք այս
 արդիւնքը ձեռք բերել որքան
 ատեն դաւաճան անհատին և աղ-
 ստոտ մամուլին անսպող արա-
 րածները բազմաթիւ ըլլալ շա-
 րունակեն մեր մէջ, որքան ա-
 տեն որ անխորհրդաբար բռնկինք
 անոնց մահացուցիչ հովին հո-
 սանքներէն :

Կը կարծէ՞ք որ ողջամտութեան
 ապացոյց մը տուած կըլլանք մենք
 հայերս, երբ մանաւանդ մեր ար-
 դի գրութեան մէջ, անգործացման
 քաղաքականութեան բոլորովին
 ներհակ ուղու թիւն մը բռնելով,
 մեր ներքին կոխենքու, առելու-
 թիւններու, դարտակ վէճերու
 անձնատուր, շարունակենք ա-
 նոնց թմրեցուցիչ ոլորտին մէջ
 օլորտար դառնալ ու գառնալ... :

Բարձրագոյն բանակոխներէ ա-
 մէն ատեն ճշմարտութիւնը չի գար
 երեւան, այլ շատ անգամ բուռն
 կոփամարտ : Թեր ու դէմ յոգ-
 ուածներ գրելէ շատ շատ ազօտ
 լոյս մը միայն կրնայ ծագիլ
 մեր թ. յաճախ կրնան տեղի ու-
 նենալ նորանոր հրդեհներ ծա-
 ւալուն և ամենակոխ : Զգուշա-
 նանք անոնցմէ :

Մենք վարչապետ մը չունինք
 որ երկաթէ ձեռքով մը սպառ-
 նացող վտանգը մեկուսացնէ : Հե-
 աեւապէս անհատաբար իւրաքան-
 չիւր հայու վրայ կը ծանրանայ
 անգործացման փրկարար դրու-
 թիւնը որ գեղերու պարտքը և
 որուն կաւարտումը պահով երաշ-
 խիք մը պիտի կազմէ ազգային
 մեծ զաղախարիւն իրականաց-
 մանը :

ՇՈՒՍԼՈՒՅԻ ՔԱՅԱՆԱՆ

Տէր Խորէն քահանային հեր-
 քումը նպատակաւ հետեւանք մը
 չունեցաւ իրեն համար. դէթ ե-
 րեւոյթները այնպէս կը ցուցնեն :
 Տէր հայրը կը յայտարարէր իր
 հերքման գրով. թէ միայն օտար
 քաղաքներու մէջ իր վրայ յոռի
 զաղախար կազմել չի տալու հա-
 մար է որ կը գրէ. և թէ՛ Շուս-
 լուցիներու զաղով իր սիրտը
 հանդարտ էր :
 Սխալ հաշիւ : Ճիշդ ասոնցմէ է

որ նախ՝ հանրագրութիւն մը
 ստացած ենք չորս անձերէ ստո-
 րագրուած որոնք պնդելով թէ
 Օ. Բ. ի գրութիւնը ոչ միայն ըս-
 տոյզ այլ անբաւական իսկ էր
 «ազգին արատը եղող» այդ քա-
 հանային արարքը պատկերացը-
 նելու, Տ. Խորէնին պատժուիլը,
 այսինքն՝ հաւանականաբար հե-
 ոացուիլը կը պահանջեն և կը
 հաւատեն թէ «ամբողջ ժողո-
 վուրդը» իրենց կարծիքէն է :

Յետոյ, ուրիշ նամակ մըն ալ
 ստացած ենք տարբեր անձէ մը
 ստորագրուած, որ նոյն երգը
 երգելով՝ քահանային քանի մը
 ըրածները կը թուէ իբրև նմուշ.
 այսինքն՝ թէ ինչպէս Աւետիս
 անուն վանկի 75 տարեկան ծե-
 լուծի մը ծեծած ոտքը կտարած
 է, թէ ինչպէս Սվազի Մկրտիչ
 ժամկոչեանի թուան դիակը գե-
 րեզման տարած միջոցին, յան-
 կարծ բարկանալով, փողոցին մէջ
 լքանել սպառնացած է և այլն :
 Այս կարգի ուրիշ երկու դէպքեր
 ալ յիշելէ ետքը, նամակագիրը
 կը խոստանայ «բազում օրինակ-
 ներ» և ևս հայթայթել ի հարկին,
 ամէնքն ալ վկանելով հաստատ-
 ուած և վաւերացուած :

Նամակը կը վերջանայ պաղա-
 տագին աղերս մը ուղղելով թաղ-
 խորհրդին, Տ. Արտէն վարդա-
 պետին և ընթերցողներու խըղ-
 ճին :

Այս պարագային ո՛չ ընթեր-
 ցողը, ո՛չ վարդապետը բան մը
 կրնան ընել. կը մնայ Շուսլուի
 Թաղ. Խորհուրդը, որուն կը հար-
 ցընենք թէ իրա՞ն են Տ. Խորէնի
 վրայ ծանրացած ամբաստանու-
 թիւնները. և եթէ այո, ի՞նչ
 գիտաւորութեամբ վար գրեր են
 այդ կարգի կրօնական մը :

Այս պայմաններուն մէջ, կը
 փութանք յայտարարել Տ. Խորէնի
 թէ այս անգամ իր կողմէ գըր-
 ուած ու է հերքումը զուրկ պիտի
 ըլլայ նշանակութենէ ու անկա-
 րող զինքը անբասիր հռչակելու
 մեր աչքին կշիռ ու կարեւորու-
 թիւն պիտի ունենայ ուրիշներու
 ստորագրութիւնը կրող հերքմա-
 գիր մը միայն, որ ջրէ Տ. Խո-
 րէնի վարքութեամբ մասին կզած
 այս բռնն ու թերեւս իրաւացի
 տրուունջները :

ՅԱՐԴԻՆ ՏԱԿԷՆ

Շարժումի երեւումէն առաջ Լուկէ
 բնակող անձի մը խնդրանքին վրայ
 սկսած էինք թերթ զրկել իրեն.
 բայց տեսնելով որ նոյն անձը չոր-
 րորք թիւէն սկսեալ թերթերը
 ետ կը զրկէր մեզ, ինչ որ այնքան
 կը հակասէր իր առջի փափագին, հե-
 տաքքեր եղանք գէթ իր մերժման
 պատճառն իմանալու և քարոզի մը
 բացատրութիւն ուղեցինք իրմէ :

Ահա թէ ինչ կը պատահանէ մեզ.
 «Ես ոչ թէ ձեր թերթերը մերժած
 եմ, այլ իրաւունքը՝ բացատրական
 քարոզ մըն ալ զրկելով իրեն : Մին-
 չեւ երրորդ թիւը ձեռքս հասած է
 Շարժում և յետոյ զարգած. ինչ որ
 շատ զարմանքս շարժեց : Ձեր քարոզ
 ստանալով, խնդիրը լուսարանուե-
 ցաւ ինձի համար :

«Անմիջապէս հասկցայ որ այդ մեր-
 ժումները առանց իմ գիտնալուս ձեր
 պաշտօնակցին կողմէն եղած են, ո-
 րուն ներկայացուցիչը՝ Արիս Կուր-
 պէթեան անուն անձը հասած տեղը
 կը պատուիլ որ այլ ևս Շարժում
 լրագիրը չընդունին և ընդունող-
 ներն ալ ետ զրկեն : Անոնց այս ան-
 ճան ընկալքը կարող եմ հրապար-
 կով հաստատել. և պատրաստ եմ
 պատասխանատուութիւնը ստանձնել,
 որովհետեւ լրագիր մը նախ և առաջ
 ազգին լրջամիտ դասուն առաջնորդն
 է, և եթէ ինքն իսկ արգահատելի
 շահախնդրութեան մը մէջ գտնուի...»

Ձեռք կրնար հաւատարմոր իրաւունքի
 արգոյ խմբագրապետը համարիւ
 զած ըլլայ յիշեալ անձին այս եպե-
 թիլի շահատակութիւններուն, և
 սակայն ամէն պարագայի մէջ սոյն
 եղելութիւնը պատուաբար չի կրնար
 ըլլալ իրաւունքին, մինչեւ որ բա-
 ցատրութիւն մը չգայ լուսարանի
 խնդիրը :

ՀԱՅԳՈՒԿԸ

Ժայռի բեկորի կիսով կրորբնած
 Այլք սեւեռուն,
 Հրացանը պատրաստ, ստոր զայն յար
 կը զիսկ հեռուն :

Գիտե՞՞ք ով է այդ կտրիւնը շեռան
 — Հայրուհի է ստի
 Որուն տունն ու ճեղ աւերողը գոն եղան
 Հուրի, աւարի... :

Անտառան սապիւն, անրան փոքիտուն
 Թիւն եկեղեցի,
 Անխոնք կր հսկի յաւիտ քաջատուն
 Հայրուհի հսկայ :

Եւ կր յարձակի աչ յախ չի գիտեր
 Կարծես անկի
 Առիւծ մ'ի կասողս, վաս քննախնդր
 կը մտնէ անի :

Դաւնացած սրտով զիսկօք ինչ կրգայ
 — Թո՛ւրք կր վնասէ
 Վրեժի յորտակին ընկնու ընկայ,
 Անցընէ թրե՛ :

Այլն այն արձուի հորիզոնին վրայ
 Ինչո՞ւ յաւեր է
 — Գո՛ւրս կր վնասէ. և կր գայն գտնէ
 Գիտի կր վրեժ... :

ԳԱՄԵՐ ԱՐՇԱԿԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԱՍԱՆՁ

Բարեկի Էսքաֆիք լրագրերը էր մարտ 16 թիւին մէջ կը հրատարակէ Էսօր s'Onխանի քննչ. տնօրէն հայր Շարմիճանի հետեւեալ սրտաշարժ կոչը .

Ամէն սուրհանդակով քստմեկը լուրեր կը հասնին մեզ օտմ. կայսրութեան հեռաւոր նահանգներէն, եւ մանաւանդ Վանէ, Մուշէ եւ Բաղէշէ : Սովը, անհելի սովը այս պահուս կը կոտորէ քրիստոնեայ ժողովուրդը :

Սովատանջ գծրասանները սրտաճմէկ խմբեր կազմած հազարներով կը լքեն իրենց գեղերը ուր այլեւս ոչ ցորեն ունին, ոչ հաճար, ոչ գարի, ոչ արջառ—այս վերջին երեք տարիները բոլոր ունեցածն յափշտակուեցաւ—եւ երկարածիգ թափորներով կերթան քաղաքները՝ աստնք ալ աւերուեն ու յետին թշուառութեան մատնուած, մուրալու համար հացի պատառը որ անօթի մեռնել պիտի փրկէ զիրենք :

Արեւակէզ ու սգեսպառ կը հասնին միսիոնարներուն դուռը որոնք ալ բան չունին անոնց տալու, եւ որոնք մեզ կը գիտեն պաղատելու որ օգնութեան հասնինք իրենց :

Մեր միսիոնարներու նամակներուն նայելով, այլեւս խնդիր չիկայ փրկելու բոլոր նօթի մեռնող թըշուառները, այլ զանոնք դասակարգելու հարկ է բաժնել, որպէս զի ամէնէն ողջանդամները միայն օգնութիւն ստանան, անոնք միայն զորս կարելի պիտի ըլլայ ճողովել այս ստեղծի պատուհասէն որ անգթօրէն կը կոտորէ հայ ժողովուրդը :

Ալ չպիտի վերջանան ուրեմն այս սարսափելի արեւահեղութիւնները : Սուրով ողջակիզումը բաւական ան-

ոնի չեղաւ : Հարկ է ուրեմն որ մեր անտարբերութեամբը կամ մեր եսաւրութեամբը թողունք որ անօթութեան եւ ուժասպառութեան մեռնին հաղարաւոր քրիստոնեաները ուրոնց սուրբ խնայեց :

Չէ՞ք լսեր անհուն աղաղակը այս նահատակ ժողովրդեան, աղիւսարչ կոչերն այն սովահար այրիներուն ու որբերուն որոնք յուսահատութենէ բազուկներն պարբերով քիչ մը հաց կուզեն շմեռնելու համար :

Ի՞նչ մեծ ու վսեմ օրինակ տուաւ մեզ՝ անհունաշնորհեալ — ու յաճախ այնքան քիչ վեհանձն — զաւակներու Ա. առեւոյ ու Եկեղեցիի, այս ցեղն համբուն որ նախապատիւ սեպեց կրիլ ամենէն սարսափելի հալածանքները քան ուրանալ Գրիստոսի հաւատաբը :

Ի՞նչ կազդուրիչ տեսարան մեր տխուր օրերուն կընծայէ այս ժողովուրդ որ իր նախնիքներու կրօնին հաւատարիմ մնալու համար տեսաւ իր ատարածքներուն կողպուածը, սուներուն հրկիզումը, պաշարներուն փճացումը, կրիներուն անպատուումը, կոյսերուն անուանումը մը ու էրիկ մարդերուն զլորիլը եւ թաղանին սայ ինչպէս ցորենի հունձք մը մանկաղջին ներքեւ :

Այսօր խլամբ խոլիտուելէ խոնջ, որուն կատաղութիւնը չէ յագեցած սակայն, կը հասնին թէ ալ պէտք չունի շարունակելու անկը կոտորածը, վստի զի յոյսը կը գնէ մեր անտարբերութեան վրայ հանդէպ Հայաստանի մեր եղբայրներուն մինչ սովը աւելի նախնիք պիտի գործէ անոնց մէջ քան իր եսթաղանը :

Գիտէ որ եթէ այս դառնագին եւ զանակին մէջ օգնեն անոնց պէթ մինչեւ գարուն, սովը պիտի կոտորէ աւելի քրիստոնեայ եւ աւելի քանի ու-

սեր պիտի ընէ քան վերջին ջարդերը :

Լսեցէ՞ք : Չոհրու հեծիւնները արդէն իսկ կսկսին նուազիլ : Հոգեվարքն է որ կը մտենայ : մթութիւնը, ծանր քունը մահամերձներու ու քստմեկի լուսութիւնը գերեզմանին որ կսկսի տիրել այդ աւերակ երկրներուն մէջ ուր ձիւնը ցրտին պատանքով մը քիչ քիչ կը ծածկէ անօթութեան հաղարաւոր մեռնողները :

Գրիստոնեաներ, գթութիւն ձեր եղբայրներուն համար որ թշուառութենէ ու ցուրտէ կը մեռնին :

Ճարտասցի, գթութիւն այս ցեղին համար որ անյայտ կը ըլլայ մեր յանցանքովը :

Գթութիւն այս հաղարաւոր սովահարներուն որոնք նահատակներու վերջա՛նցներ՝ մեռնելէ կամ ուրանալէ զատ ուրիշ ճար չունին, եթէ իսկոյն իրենց օգնութեան չհասնինք :

Կը պաղատինք Ֆրանսական մամուլին, ամէն կուսակցութիւններու թերթներուն, արտասպել մեր կոչը եւ յիշեցնել թէ հանդանակութիւն մը բացուած է մեր գրասենրակը, Ռեկառ փողոց, 20, Փարիզ, ուսկից հետզհետէ քանի մեղ զրկուին պիտի ճամբայ հանենք բոլոր նպաստները, գրամ, հագուստ, եւ այլն :

Բայց, շատպինք, վստի զի անդորմ սովը չսպասեր, եւ վաղը գոցէ մեր նպաստներ շատ ուշ պիտի հասնին :

«ՇԱՐՄՈՒՄ» ՊՅՏԱՍԻՆՆԵՐԸ

Անասորագիր քարդի հեղինակին, Ռուսչուք . — Ձեր քարդն տոնք եւ զամբիւրը նետեցինք : Պատուաւոր մարդիկ կոտորագրին :

— Ուրիշ չունէ՞ք, հարցրեց Պ. Նահապետեանը : — Ոչինչ, պատասխանեցի ես :

— Լաւ մտածեցէ՞ք, գնացէ՞ք ձեր թղթերը լաւ քննեցէ՞ք. գիտե՞մ որ Ռուս կառավարութեան դէմ ոչինչ չէ կարող լինել ձեմարանում, սակայն թուրքերի դէմ էլ եթէ լինի լաւ չէ :

— Շատ լաւ, ասացի : — Եթէ կարող էք, բացէ՞ք ձեր գասակից ընկերներին մտաւեկները եւ թղթերը քննեցէ՞ք, առաջարկեց Նահապետեանը :

— Այդ գործը ես չեմ կարող անել, պատասխանեցի եւ սենեկից դուրս եկայ իմ թղթերը քննելու : Մտաւեկի մէջ գտայ միայն մի թղթի կտոր. դա իմ պատանեկական գրչի առաջին արդիւնքն էր — մի ուսանաւոր «Ջոզսեւեան» վերնազրով : Եւ այդ զգացումները առաջին հառաչանքս էր, որի էլ Արաքսի ափը գնալուց եւ սրտումս երգուելուց յետոյ : Այդ հառաչանքը սիրուն կոյսի համար չէր, այլ գերի ու աւերակ հայրենիքի :

Հինց որ ձեռքս ընկաւ այդ իմ առաջին հառաչանքը, որի մէջ ոչ բարձր թոնջ կար, եւ ոչ էլ ազատական ձգտումներ զայժառ արտայայտութիւն, վարանեցի : Սիրտս չը տեսցայ այդ անդրանիկ եւ պատանեկական սուրբ թոթովանքը կրակին մտանել իրր մի թանկագին իր սեղմեցի կրծքիս՝ մի լաւ սեղ պահելու համար. եւ գնացի Նահապետեանին յայտնեցի որ ոչինչ չունեմ :

Այդ գեղքը եղած միջոցին Գեորգ կաթողիկոսը մտած էր եւ Մանկունին մի քիչ յետ քաշված, սակայն

ԲՈՒԼՊԱՐԻՈՑ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՁԻՆՈՐՆԵՐԸ

Այո, Բուսանիան ահագին դեր կատարեց Բուլղարիոյ յեղափոխութեան համար :

Այստեղ էին ապաստան գտել յեղափոխական հրապարակախօս Լիւբէն Կարաւելով եւ հրապարակախօս, բանաստեղծ ու գործնական յեղափոխական իրիստօ Բօաւէ :

Այնտեղ էին գնում եւ հալածված բոլոր կորովի, ապստրտ ու Ֆիզիքական ուժերը եւ զբաղվում զինվար-ժուլթեամբ. այնտեղ էին դէնք եւ ուրիշ պատերազմական մթերքներ գընվում, եւ այնտեղից էր որ առաջին արշաւանքները սկսեցին նշանաւոր խմբագրաները :

Այդ պատճառով իսկ բոլորն էլ համոզված էին որ յեղափոխական գըլխաւոր կօմիտէն գտնվում էր Բուսանիայում : Թէեւ այդ սխալ էր, սակայն իրանք յեղափոխականները չէին աշխատում այդ սխալ համոզումը ջրել :

Սակայն իսկապէս հետաքրքիր է իմանալ թէ ո՞ւր էր գտնվում Կ. Կօմիտէն, որի անդամ երբ վարում էին ամբողջ գործը . . . «Ամէն տեղ եւ ոչ մի տեղ» խորհրդաւոր կերպով պատասխանում է Ջախարի Ստոյանով, յեղափոխական եւ գրագէտ : Այդ պատասխանով կարելի է հասկանալ որ Կ. Կօմիտէն անդամները հաստատ տեղ չունէին. նրանք լինում էին ամէն տեղ ուր պէտք էր զգացվում : Միշտ շարժման մէջ էին, թոչուտ էին մի տեղից միւս տեղի :

Այդ պատճառով էլ մենք տեսնում ենք որ Լեւակին, Բօաւեը, Բէնկովսկին եւ ուրիշ նշանաւոր յեղափոխականներ մէկ երևում են Բուլղարիոյ զանազան կէտերում, մէկ Սերբիա-

ՎԱՐՊ-ՊԱՏՐԻՎՈՒԹԻ ԳԵՇԱՍԱԿԱՐԱՆԸ (6)

Մառաի հետ միասին գնացինք, միայն ննջարանից դուրս գալուս միջոցին նկատեցի որ մեծ ուսանողներից էլ մի քանիսը հագնվում են :

Այդ ինձ համար բոլորովին տարօրինակ երևաց : Կատարեալ հանելուկ : Միթէ՞ նրանց էլ էին արծակելու ձեմարանից :

Վերջապէս ննջարանի բաժնից դուրս գալով մենք մտանք բուն ձեմարանի միջանցքը, որի մէջ աղօս կերպով վտաւում էր միայն մի լապտեր : Այդ աղօս լոյսը եւ երկար ու ձիգ միջանցքը շատ վատ ազդեցին նետաղբերի վրա. իսկոյն միտքս ընկան հոռմէական եզրիտների զիչերային դատաստանները : Մանաւանդ որ Նահապետեանը եզրիտութեան լաւ ներկայացուցիչներից մէկը կարող էր համարվել :

Մեղքս ինչ թագցնեմ, այդ վայրկեանում, մարմնիս վրայով մի սարսուռ անցաւ, մի փոքր վախ զգացի. անբաւարարելի վախ, զգանքի հետ միասին : Սակայն այդ զզվելի զգացմունքը տեսեց միայն մի վայրկեան : Ուժերս հաւաքեցի եւ հաստատ վրձնեցի իմ սովորական յանդգնութեամբ, դուրս գալ հայ եզրիտի առաջ :

Արագարար բարձրացայ սանդուղքներից, առանց ծառային սպասելու շտապեցի գէպի տեսչի սենեակը եւ ուժով դուռը հրեցի : Ներս մտայ, այնտեղ էր Նահապետեանը, Սուքիասեանը, մի քանի հասակաւոր ուսանողներ, յատակի վրա թափված էին բաւական մեծ քանակութեամբ ձեռագիր թղթեր եւ ներկայ եղող-

ները գէմքերը բոլորովին այլայլված էին :

Մի վայրկեան շուարած մացի, տեսարանը ինձ համար շատ անհասկանալի էր. վերջապէս հարցրի .

— Ինչու էք ինձ կանչել, Պ. Նահապետեան : Նա պատասխանեց իր սովորական լրջութեամբ, սակայն առանց իր երբնակի կեղծ ժպիտի .

— Պ. Վարդ-Պատրիկեան, այժ գիշեր Երեւանից մանաւոր սուրհանդակ եկա բարեկամների կողմից, որ վաղը ժամաարմի շէֆը պէտք է գայ խուզարկելու ձեմարանը : Այնտեղ ձերբակալութիւններ են եղել եւ խուզարկութիւններ. Եղիազարեան, Մատակեան եւ Գալախան (որոնք բոլորն էլ Երեւանում շատ բարձր դիրք ունեցող հասուն երիտասարդներ էին) խուզարկվել են : Սրանք բոլորն էլ աքսորվեցին մի քանի տարով : Մատակեանը մեռաւ աքսորում : Մենք համոզված ենք որ ձեմարանում վտանգաւոր ոչ մի բան չը կայ սակայն ամենաչնչին բանը ամենահասարակ ազատ ոգով գրուածքը կարող է վտանգի ենթարկել ձեմարանը. մեր պարտականութիւնն է ձեմարանը միշտ գերծ պահել այդ տեսակ կասկածանքներից : Մենք լաւ գիտենք որ տաքարին երիտասարդները եւ պատանիները շատ շուտով են սղեւորվում այդ տեսակ բաներով. ուստի խնդրում ենք ի՞նչ գրուածքներ ունէք, որոնք կարող են կոտորվութեան դժգոհութիւն պատճառել, յանձնեցէ՞ք մեզ :

Ես առանց ժամանակ կորցնելու հանցի իմ ձեռքում գտնված բանաստեղծութիւնը եւ յանձնեցի Պ. Տեսչին :

ինչպէս այն ժամանակ լրեցինք, միակ Մանկունին էր եղել պատճառը որ էջմիածինը կարողացաւ զիմադրել ուս կառավարութեանը՝ իր սղտոտ ոտտիկաններով ձեմարանը չը պղծելու . . .

Բ.

1883 թիւ հոկտեմբերի ամիսն էր. մենք տասներեք արտաքսվածներս հեռացել էինք ձեմարանից եւ ապրում էինք վաղարշապատում : Մեզ կամաւորապէս հետեւել էին եւ 50 ի կապակրանի շրջորդ գասարանից սկսած մինչեւ իրենց բողոք : Այդ վերջինները նպատակն էր իրանց հեռանալով ճնշում գործ դնել Մակարի վրա, որը այդ միջոցին տեղապահ էր, մեր պահանջներն իրագործելու, եւ արտաքսվածներին նորից ներս առնելու համար : Սակայն այդ բոլորը զուր անցաւ : Մակարը եւ նրա արբանեակները հաստատ մնացին իրանց որոշման վրա : Եւ մենք բոլորս էլ ստիպված էինք հեռանալ վաղարշապատից : Առաջին օրերում բոլորս էլ ողբերով ծրագրիւններ էինք կազմում մեր նոր կեանքի համար. իմը արդէն որոշ էր—մտնել առսաց ուսումնարան : Ութերորդ գասարանի երկու աշակերտներ էլ վճռել էին գնալ սոսական Տուլա քաղաքը զի նազործութիւն սովորելու, հայրենիքին օգտակար լինելու համար, Ա. Վաթանեան եւ Միքայէլ Տէր Աւետիքեան :

(Շարունակելի)

յում ու յանկարծ նորից Ռուսմանիա-
յում:

Շարժում որ անշուշտ շատ կը դա-
տապարտվէր մեր յեղափոխական սուս-
քննադատներին կողմից, եթէ այդ
պարտքները այն ժամանակ Բուլղա-
րիոյ մէջ գոյութիւն ունենային: Սակայն
խեղճ բուլղարներն էլ ու-
նէին այդ աղտոտ սիւպերը, թէեւ ա-
ւելի քիչ չափով եւ ոչ այնքան ստոր
տեսակի:

Այո, այդ Կ. Կոմիդէն գոյութիւն
ունէր ամէն տեղ, եւ նրա անդամ-
ները մեծ մասը շարժուն էր, միայն
Լիւբէն, Կարաէլովն էր սպորում Ռու-
սմանիայում եւ Օբրէսկենիւր Ռուսու-
կում:

Կ. Կոմիդէն ունէր մի սրտշնորհակ
որը սակզմով էր իր երկրի պայման-
ների համաձայն եւ միւս կէտերում
բոլորովին կամ աւելի ճիշտը շատ
նման հայկական ծրագիրներին:

1867 թւին Ռուսմանիան լիքն էր
հարածական կտորիչ ու կորովի բուլ-
ղարներով, ամէն տեղ թագաւորում
էր ոգեւորութիւն, սրճարաններում
եւ գինեմոներում ամենայն արագու-
թեամբ յեղափոխական գործի աջող
եւ ձախ պայմաններ մասին վճիռ-
ներ էին տրվում, որոշում էին—որ
տաճկի օրհասը հասել է եւ այլն...

Այդ վառ արամադրութիւնը աւելի
սաստիկացնում էին Բուլղարիայի ե-
կամ նոր փոխտականները, որոնք
վառ կերպով նկարագրում էին իրանց
երկրի սոսկալի վիճակը եւ ժողովրդի
արամադրութիւնը, ի հարկէ միշտ
չափազանցներով, ապստամբել եւ ժո-
ղովրդի յոյսը օտար երկրներում գըտ-
նելով հայրենակիցներին օգնութեան
վրա: Այդ յուզիչ նկարագրութիւն-
ները եւ յուսատու պատմութիւնները
աւելի էին ոգեւորում տաքազուլուս
եւ սաքսիբտ գաղթականներին, նրանք
հրճուանքից խելքեր կորցնում էին
եւ շատում որ առաջ գինւած մասնել
իրանց ճնշված երկիրը եւ իրանց
սրտերը ծակող վրէժը յագեցնել...

Ահա այդ միջոցներին էր, որ Ֆի-
լիպ Տոտիւն, իր 35 քաջերովը զի-
շեր ժամանակը անցաւ Դանուբը եւ
իջաւ Շիշտովի մօտերը:

Տոտիւ Տրնովցի անասնաբան
էր, եւ մի անգամ յիմար բանի պատ-
ճառով Թուրքաց բանան էր մտել եւ
կորցրել իր բոլոր ունեցածը. դրա-
նից յետոյ փախաւ լեռները եւ սկը-
սեց հայրուկութեամբ պարապել մի
քանի քաջերի հետ, նորից ձերբա-
կալից բոլորովին գնաակահար կղած,
եւ ցմահ բերդարգելութեան դատա-
պարտվեց Սլովէնի բանտում: Այդտե-
ղից էլ փախաւ եւ անցաւ Ռուսա-
նիա. տեղական կառավարութիւնը
նրան ձերբակալեց թուրքերի պա-
հանջով, ասկայն գիշանելով տեղացի
բուլղարներին խնդրանքին ազատեց.
վերջապէս 67 թւին այն 35 քաջերի
գլուխն անցած մտաւ Բուլղարիա:

Հենց Շիշտովի մօտերը Տոտիւի
խումբը իր ձեռքերը ներկեց հայ-
րենիքի դարեւոր թշնամու «պիղծ
արիւնով», մի քանի հովիւ թուր-
քեր սպանելով:

«Տոտիւն առաջ էր անցնում առանց
որոշ պատերազմական ծրագրի. նը-
րանց աւելի մղում էր վրէժի յախու-
ղըն ծարաւը, դրա համար էլ արշա-
ւանքը կերակւան վերջ ունեցաւ,
սակայն չը պէտք է մոռանալ այն
կարեւոր հանգամանքը որ այդ առա-
ջին գործն էր. իսկ թացայտ է որ
ամէն գործի սկիզբը շատ զփուար է
եւ ամէն կարելի սխալներ անխու-
սափելի» ասում է մի Ռուս հրապա-
րագիր, բուլղարական յեղափոխու-
թիւնը ուսուցնալիքով:

Արշաւախումբը իր անդամների
անփորձութեան պատճառաւ իրան
նկատել տեց, եւ երբ գիշերը քը-
նած հանդիստ էր առնում վերբովկա
գիւղի մօտ, առանց մի բան սպասելու
գիւղի թուրքերը մօտ երկու հա-
րիւր հոգով յանկարծակի յարձակ-
վում են խմբի վրա. սկսվում է կա-
տաղի կռիւ, անփորձ յեղափոխա-
ների մեծ մասը ոչնչանում, իսկ
Տոտիւն իր մի քանի ընկերներով
զենքի ուժով ձամբաւ է լաց անում
եւ փախչում: Այդ կուռում առաջինը
ընկնում է խմբի գրոշակակիրը—Ի-
ւան Շիլպովի:

Այդ լուրը կայծակի արագը-
թեամբ տարածվեց ամբողջ Դանուբ-
եան վիլայէթում. Թուրք կառավա-
րութիւնը իր բոլոր ուժերը լարեց
Տոտիւն բռնելու. ասկայն բոլոր
շանքը սպարդիւն մնաց, Տոտիւն ա-
մէն տեսակ նեղութիւններ կրելով
փախաւ Ռուսմանիա եւ այնուհե-
տեւ զագարեց յեղափոխական վի-
նելի:

Ի հարկէ թուրքերը բոլորովին կա-
տաղած իրանց անաջողութեան վրա
Տոտիւն ձերբակալելու խնդրում,
սկսեցին խեղճ ժողովուրդից վրէժ
լուծել ըստ իրանց սովորութեան:

«Այդ յախուռն արշաւանքը գործ-
նական օգուտ չը տուց, Բուլղարիան
չազատեց, ասկայն մեծ տպաւորու-
թիւն գործեց, թէ թուրքերի եւ թէ
բուլղար ժողովրդի վրա: Առաջիննե-
րը զգացին որ բուլղարը երբ զենքի
զիմեց, սերմն եւ պէտք է շարունա-
կէ այդ կերպով մինչեւ իր նպատա-
կին հասնի. իսկ բուլղարներին հա-
մար էլ եղաւ մի կենդանի օրինակ,
որը գծում էր այն շաւիղը, որով
պէտք է գնաց ամէն մի ստրուկ, իր
չղթաները ձեռնախիւղ եւ իր ազա-
տութիւնը ձեռք բերելու համար»,
ասում է նոյն սուս հրապարակագիրը:

ՎԱՐԴՈ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

(ԹԱԻԻ ԽՄԲԱԳՐԱՎԱՆԵՆ)

—)(—

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

«Որանք խնդիրներ կը ծա-
գին: Աւրիշ խնդիրներ կերթան
կուզան, կը ներկայանան, կը
տիրեն եւ կը լուծուին կամ կան-
հետին: Արեւելեան խնդիրը միշտ
մեր հետ է: Ահա աւելի քան մէկ
դարէ ի վեր վերջնապէս ծնունդ
առած է, երբ թուրք ցեղին
մարտական ու աշխարհակալի թա-
փը սպառեցաւ, երբ մեծն Գա-
թերին՝ մեծն Պետրոսի հետե-
ւելով մէկ քանի հրաշալի ուս-
տումներ ըրաւ դէպի Այա-Սո-
ֆիա:

«Այդ վայրկեանէն, Արեւելեան
խնդիրը կերպով մը անխախտ
հիմը կազմած է եւրոպական քա-
ղաքականութեան: Իր ուղղակի
կամ անուղղակի ազդեցութեամբ
խորապէս փոխած է գիււանգի-
տութեան բոլոր կարգադրու-
թիւնները, պատմութեան բոլոր
դէպքերը:»

Հոս «Թան» կը յիշէ արաքա-
կան դէպքեր որոնք յապաղեցան
կամ տարբեր գոյն աւելն Արեւել-
եան խնդրին պատճառով:

«Այժմ երկրագնդի ամէն
կէտերուն վրայ զփուարութիւն-

ներ կը ծագին, որոնք կսպառ-
նան ամենածանր վէճեր յարու-
ցանել այս հին, այս յաւիտե-
նական, այս անվերջանալի գոր-
ծը աչքէ հեռացնելու վտանգով
— եւ սակաւ անոր համար մահա-
ւանդ որ կառավարութիւնները,
խալպէս ոչ այնչափ հպարտ ի-
ւանց երկամեայ գործակցու-
թեան յաջողութեամբը, ուզած
բաներնին էր զգուշաւոր լու-
թիւն մը պահել այս նուազ փա-
ռաւոր բանակցութիւններուն նը-
կատմամբ:

«Այսու հանգերձ ուղենք չու-
ղենք հանրութեան ուշադրու-
թիւնը գարձելու կամ յառելու
է այս հարցին վրայ, երկու
պատճառներով, նախ եւ առաջ
Արեւելեան խնդրին մէջ միմի-
այն գիււանգիտական շահեր կան
վտանգի տակ. հոն է ճակատա-
գիրը, գոյութիւնն իսկ ամբողջ
ցեղերու, Արեւելքի ան քրիս-
տոնեաներուն, որոնք միշտ կո-
չում ըրած են ամենախորին հա-
մակրութեանը մեր Արեւմուտ-
քին, որոնք մասնաւորապէս
ուրիշից պարաւոր յաճախորդն
են Պրանսայի եւ որոնց նկատմամբ
Եւրոպան նուիրական պարտաւո-
րութիւններ ստանձնած է:

«Յետոյ, որչափ կրկնենք քիչ
է, սերտ համերաշխութիւն մը,
անձուկ մօտաւորութիւն մը կայ
Արեւելքի մէջ եղածին կամ չե-
ղածին եւ այն եղանակին միջեւ
որով երկրագնդի միւս մասերուն
մէջ ազդերը կը վերաբերուին
մէկըմէկու նկատմամբ: Տէրու-
թիւններու ընթացքը Կ. Պոլսոյ
մէջ անպասճառ իր հակահար-
ուածը պիտի տեսնայ միշտ ի-
րենց փոխադարձ յարաբերու-
թիւններուն վրայ Բեքինի, Գա-
հրէի կամ մինչեւ Սուլանի ա-
նապատներուն մէջ:

«Որք պիտի հատուցեն թէ
կրէտէի գալթակցութիւնը բը-
նութիւն չունի տէրութիւններու
մէջ անսպասելի կերպով ցանկու-
ամենածանր զփուարութիւններու եւ
ամենավտանգաւոր պահանջում-
ներու սերմերը... Շարժները
կը յաջորդեն շարժներու, ա-
միսներն ամիսներու, տարիներն
իսկ տարիներու եւ նաւատորմերը
կը շարունակեն պահպանել կամ
ստեղծել մը առողջապահական շըղ-
թայ ձեւացնել կաթսայի մը շուրջ
ուր կեռայ ու կը զեռայ ամբողջ
ժողովրդեան մը անիշխանու-
թիւնը:

«Բան մը չըլլար: Կամ լաւ եւս
կը սխալինք. բան մը եղաւ,
բայց ի՞նչ. «Սլոյնեպուրկի» յի-
տըսկոչումը ինչպէս նաեւ զերման
ջոկատին կրէտէէ, այսինքն Գեր-
մանիոյ եւ իր ազդեցութեան բար-
ձումը կղզիէն: Այս մասին տըր-
ուած ապահովիչ բացատրութիւ-
նը գիտենք: Եթէ Գերմանիա կը
մեկնի անոր համար է, կըսեն,
որ սպառ ապարէզ թողու Եւրո-
պայի: Չուղեր եղեր ուղղակի ըն-

կերանալ Եւրոպիոս իշխանի հաս-
տատութեան իբրեւ կառավարիչ
կրէտէի: Կը շաշուի կերթայ,
հաւանականաբար Աստորիան ալ
ետեւէն, գործը թողով Պրան-
սայի, Ռուսիոյ եւ Անգլիայի ու-
րոնք սկիզբէն պաշտպան հան-
դիտացան հեղինակութեան եւ ու-
րոնք երաշխաւորեցին 155 մի-
լիոնի փոխառութիւնը: Վերջա-
պէս, միս մինակ, անոնք պիտի
փութացնեն դէպքերուն ընթաց-
քը, Եւրոպիոս իշխանի հաստա-
տեն, ու տեւական կառավարու-
թեամբ մը օժտեն կրէտէն:»

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՏՈՒԳԱՆԻՔ

Ռուս կառավարութիւնը որո-
շել է Բեթէրսպուրկ փոխադրել
բանակցութիւններն ի մասին պա-
տերազմական սուգանքին գոր-
թութիւնը իրեն կը պարտի 1878էն
ի վեր, այս խնդիրը բացարձա-
կապէս բաժնելու համար այն
քաղաքական խնդիրներէն որոնք
առկալս կը մնան Կ. Պոլսոյ մէջ:

ԼՈՐՏ ՍՈՒՋՈՐԻ

Անգլիոյ նախարարապետը բը-
ժըղուելու համար ահամայ հա-
րաւային Պրանսա գնաց: Անգ-
լիական մեծ թերթեր վախ կը
յայտնեն թէ մի գուցէ լուրտը
բոլորովին քաշուի քաղաքական
կէտքէ՝ չորս տարի շարունակ
վարելէ ետք Անգլիոյ արտաքին
բազմակնճիտ գիււանգիտութիւ-
նը: Այժմ ինք փոխանորդած է
իր քննորդին Պ. Պալֆուր: Բայց
ընդհանրապէս հաւանական կը
նկատուի որ իրեն յաջորդէ Ե-
րիպոտոսի Անգլ. լիազօր պատ-
ուիրակ Լորտ Գրովըր:

«Մ է Յ ն»

Եթէ, Միացեալ-Նահանգներու
օժանդակութեամբ Գուպա ձեռք
բերէ իր բացարձակ անկախու-
թիւնը, այս բանը պիտի պարտի
մեծ մասամբ «Մէյն» ընկղմուե-
լուն: Այժմ իւրեքքի պաշտօ-
նական թերթը կը յայտարարէ
թէ «Մէյն» անհերքելի կերպով
արտաքին պատճառէ ընկղմած է,
ինչ որ ցոյց կուտան ալէտին զա-
նազան պարագաները:

Գուպացիները որոշել են բա-
ցարձակ անկախութիւն միայն ըն-
դունելու եւ ասոր համար պատրաստ
են եղեր 500 միլիոն ֆր. տալ
Սպանիոյ:

Ա Ջ Դ

Չանապան! ողմբեր մեղ կը հար-
ցուի թէ «արժում» ինչ յարա-
բերութիւն ունի «Խրաուուք»ի
հետ: Կը պատասխանենք թէ
«արժում» ի խնդիրները բացի
բարեւամական յարաբերութենէ
ուրիշ ու եւ կապ չունին «Խրաու-
ուք»ի հետ, որ կը հրատարակ-
ուի տարբեր անձի տնօրէնու-
թեան ներքեւ:

—)(—

ԲՕԼԻԹԻԳԱ

—)(—

ՌՈՒՍԻԱ ՎԷ ԹԻԻՎԻՎԻ

Թիւրքիա վէ Ռուսիա պէյնին-
տէ մընասէպաթըն պողոտմուշ
օլտըզը թէլէկրաֆլար պիլաիւր-
մէքտէ տիրէր: Կարս թարաֆըն-
տա մուհարէպէ հազըրըզլարը
կէօրիւմէքտէ տիր:

Ռուս սէֆիրի Մ, Ձէնովիէֆ
թաղմինաթը հարպիէտէն 25 միւ-
եօն ֆրանգըն աղ միւտաթը գար-
ֆընտա թէտիյէ օլընմասըլը
թաղտիրտէ թէքմիւ մէպլալը
թալէպ իտէճէկինի, վէ իլալէ-
թէն Ռուս հիւքի մէթինին քէն-
տի մաթլուպընա ըրզա կէօթէ-
ըրմէտիկի հարտէ հէր տիրըլի-
թէտպիլէրի էլէ ալաճալընը
խարիճիէ Կազըրը Թէվֆիդ փա-
շայա սէօյլէմիշ տիր:

ԹԻԻՎԻՎԻ

Էվրօրա Օսմանլը էլլիլէրին
վէրտիքլէրի հալատիսլէրէ կէօ-
րէ, Կիրիտ վալիլիկի իշիւն պիր
Թիւրք թէպասաընըն ինթիխա-
պը հազըրընտա Պապը Ալիտէն օ-
լան սօն թէքլիֆ պէշ սէվլէթլէր
թարաֆընտան ըէտտ օլընմուշ
տըր:

— Բաղէշ զապթիյէ նազըրը
էօլաիւրիւմիւշ տիր: Պու ճինա-
յէթին էրմէնիլէր թարաֆըն-
տան իճրա օլընմասընա տաիր
շիւպհէլէր սուպութ պուլմամըշ-
լար տըր:

— Վօլօտաքի զաթօլիք րա-
հիպին (քահանայ) գաթլինի ի-
շիթտիկինտէ Ֆրանտա խարիճիէ
նազըրը Մ. Հանօթօ Աթինայա վէ
Սթանպօլա թալիմաթ կէօնտէր-
միշ տիր:

— Վիւքէլա մէճլիսի, Սաորա-
զամըն ըրիյաթի թահթընտա,
Թէսալիսատաքի Թիւրք օրտուըն-
տան պիր ալայըն Պուլկար սի-
նօրընա կէօնտէրիմէսինի թահ-
թը զարարա ալըպ, Սուլթան
պու գարարը թաստիդ իթմիշ
տիր:

— Պիր շախայա նազարէն,
պու կիւնլէրտէ էյուպտա փէօն
Թիւրքլէր պիր խաֆի (գաղանի)
մէճլիս գուրմուշ օլուպ, պու
վուգուաթ Ելըտըլտա պէօյիւք
էնտիշէ իլէրի կէթիլմիշ տիր:

— Տիկէր թարաֆտան խապէր
վէրիլաիկինէ նազարէն, 14 էճ-
նէպի վէ հայ յեղափոխականլար
Սթանպօլտա պուլուուպ, պիր
նիւմայիշ իճրա իտէճէքլէր իմիշ:

— Պու իքի մէսէլէլէր հազ-
գընտա շէտիտ թահգիգաթլար
իճրա օլընմասը էմր օլընմըշ տըր:

ՄԱԿԷԹՈՒՆԻՍ ԳՕՄԻԹԷԹԻ

«Աթանա Պիւլկար»ըն Սօֆեա-
տան վէրտիկի հալատիսաթա
կէօրէ, Մակէթոնիա գօմիթէթի
Սիլիպ սանճալընտա թիւրքլէր
թարաֆընտան իճրա օլընման մէ-
զալիմի հալի թէֆէրուաթլը
պիր թահրիլաթ հազըրլայուպ

պէօյիւք սէվլէթլէրին Սօֆեա
գօնսօլուարընա թագտիմ իտէ-
ճէք տիր: Պու թահրիլաթտա՝
իսքէնճէլէ տիւշար օլան 61 պուլ-
կարլարըն իսմի պուլուուպ: ա
տըր: Սիլիպ հապսիսանէսինտէ
407 պուլկար պուլուուպտա
տըրլար: Շիմտի Սօֆեատա մա-
կէթոնեալը 180 մուհաճիր պու-
լուուպտա օլուպ, պէօյիւք սէ-
ֆալէթէ տիւշմիւշլէր տիր:

«ՀԷՐԸԼՏ»ԸՆ ՄՈՒՍՊԻՐԻ

Կէշէն սէնէ թիւրքտէն ըըշ-
վաթ ալմըշ օլան «Իււնօրք Հէ-
ըըլտ» կաղէթաթը թարաֆընտան
Տօրթ. Հէվուրթ իսմիւնտէ պիր
միսիօնար Հայաստանը կէշէք
կէշէն գանլը վուգուաթլարա
տայիր եալան տօլան մալիմաթ-
լար մէքքլէր կաղէթայա եօլլա-
մագտայըրը, վէ Թիւրք կաղէ-
թալար տախի պու եալան հա-
վասիսլէրի տէրճ իտէրլէր իտի:
Շիմտի, պու միսիօնար ՚իււնօր-
քա ալաթի իտուպ՝ լիսանընը
պիւս պիւթին տէշիշտիրէք
սէմիշ տիր քի — «Սօն գըր՝ ըն-
լարտա գուրպան օլան էրմէնի-
լէրին մըգտարը զանն ու նէշը
օլընմագտան ըէք զիյատէ տիր,
վէ հիշ ինանմամ քի Սուլթան
Հայաստանը իսլահ իտէպիլիսին:»

ՀԱՎԱՏԻՍԱԹ

—)(—

Սթանպօլտան «նոլոսթի» կա-
ղէթասընա եազըլտըլընա կէօրէ,
Ինկիլիթէրա էլլիսի Պապը-Ալիէ
պիր նօթա վիրուպ, Մակէթո-
նիտա թիւրքլէրին իճրա իթ-
տիքլէրի գարըըզլըզլարը թա-
հիպ իթմիշ տիր (պախարակի):
Տիկէր էլլիլէր տախի Պապը Ալի-
նին նազարը տըրգաթընը Հա-
յաստանտա իլէրի կէշէն գարը-
շըզլըզլար իւղէրինէ տալէթ իթ
միշլէր տիր:

— Բուճ մէնպարտան խապէր
վէրիլաիկինէ նազարէն Վօլօ: ա
իքի թիւրք աօքէրի Տալէղիօ
նամ կաթօլիկ րահիպի գաթլ իթ-
միշլէր տիր: Խըղմէթքարլարը
իլէ քիլիսէյէ վէ օրտտան ույ-
գույա տալմըշ օլան րահիպին օ-
տասընա կիրուպ սիւնկիլէր իլէ
եէտի եէրտէն եարալարլար:
Խըղմէթքար պիր ըվոլվէր պօ-
շալտըգտան սօնրա գաշմըշլար
տըր: Բահիպ էօլտիքաէն էվվէլ
քէնտի գաթիլլէրին քիմ օլտու-
ղընը սէօյլէյէպիլմիշ վէ պու
ճինայէթտէն սօլայը Վօլօնըն
Ֆրանտա վէ Ռուսիա քօնսօլուարը
հիւքիւմէթէ շէտիտէն շիքեայէթ
իթմիշլէր տիր: Պու գաթլին սէ-
պէպի շու ըմըշ քի մէքքլէր րա-
հիպ գրալ Երկիտօնըն սօն ճինա-
յէթտէն սալիմէն գուրթուլմուշ
օլտուղու իշին քիլիսէտէ տուա-
լար օգումուշ տըր:

— Սթամպօլ միլլէթտաշլարը-
մըլըն կէօղի այտը. Սուլթանըն
պիր իրտտէտի մուճիպիճէ եէնի
պիր մահպուսհանէ եաբըլաճազ

տըր: Կէօրիւնիւր քի սօն վու-
գուաթլարտա թէճըրիւպէ իլէ ան-
լաշըլար քի Սթանպօլըն շիմտիքի՝
ղընտանլարը ըէք տար վէ ուֆազ
տըրլար, պուսըն իշին, Եէտի-
Գուլէ գուրպինտէ 30,000 մու-
րապպա արշըն վիւսաթընտա պիր
մահալտէ էվրօրա պիշիմիւնտէ
պիր հապս եաբըլաճազ ըմըշ:

— Թէսալիա Թիւրք հիւքիւ-
մէթի Եուսան բարլամէնթօրըն-
տա միւլիման մէպուս (Երիսիս-
իան) Մ. Պէտրէտտիւնի տէրտէսթ
իթմիշ տիր:

— Կէշէն սէնէ հայ գաղթա-
կանլարա մուպէնէթ իթմէք ի-
շիւն Ինկիլիթէրտա ման Վառնայա
կէլմիշ օլան Մ. Հէյթըրըն ալիւ-
սի Լէյտի Հէյթըր պու սէֆա
Վառնա գըլլար արհեստանոցըն-
տան Լոնտրայա կէօնտէրիլմիշ օ-
լան էլ իշլէրի Գրալիցա Վիք-
թօրիայա թագաթիմ իթմիշ վէ
գրալիցա չօգ պէյէնուպ հայ-
լար մէնֆաաթընա պիր մէպլալ
վէրմիշ տիր:

— «Թայմլ»ըն Բիրէա մուխպիրի
մէքքլէր շէհրտէ 17,000 Կիրիտ-
տէն գաշմըշ մուհաճիր պուլուու-
տըլընը եազըլ պուսլարտան
12,000 քիշիւնին կիւնլիք նաֆա-
գասը հիւքիւմէթ թարաֆընտան
թէտարիք իտիլաիկինի վէ 2000
քիշիւնին զայլը հաստալըզլարա
տիւշար օլուպ կիւնտէ Երիմի քի-
շիւնին էօլտիկինի սէօյլէմիշ տիր:

— Ալմանիա իմրէրաթօրը Վիլ-
հէլմ «Պլուէմպուրի» զըրհըլընըն
Կիրիտտէն շըգտըլընա տայիր
թաֆուլաթ վէրմէք իշին Պէրլին
էճնէպի սէֆիրլէրինէ պիլզաթ
զիլալէթ իթմիշ տիր:

— Սթանպօլտան եազըլտըլը-
նա կէօրէ, պու արա Ռուսիա
քէնտի մք Տէնիլ տօնանմասընըն
թամիքէ հաճէթի օլտուղու սը-
րտտա Գարա Տէնիլէ կիլմիշք ի-
շիւն պօղալարտան սէքպէթճէ
կէշէպիլմէսի հազըրըն էլէ կէ-
շիլմէյէ շալըշմագտա ըմըշ:

— Ռոլիթիշէ Գօրէսքոնտէնճէ
եազըլտըլընա նազարէն, թիւրք
հիւքիւմէթի վէրտիկի ըէամի
թէքըլիպլէրէ մուխալիֆ օլտրազ
Մակէթոնիտա պէօյիւք մուհա-
րէպէ հազըրըզլարը կէօրմէքտէ
վէ Թիւրքիտա պուլուուպ պուլ-
զարլարա գարըն մէզալիմ կիւն
կիւնէ արթըրմագտա տըր:

ՅԵՏԱԶԳՈՒՄ

Այն Երկու թղթակցութիւննե-
րը զորս իտտացանք հրատա-
րակել մեր այսօրուան թուով,
զանազան պատճառներով յետա-
ձգուած են մեր մօտալուտ թի-
ւերէն մէկուս համար:

ԻՆԻԿԱՍՏՏՈՒՄ

Տեղւոյ Աղք վարժարաննե-
րուն ի նպատ թատերական ներ-
կայացուլը որ հինգշաբթի գիշեր
պիտի տեղի ունենար, օգին գէ-
շութեան պատճառով յետաձգ-
ուեցաւ այս գիշերուան:

—)(—

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Խորհուրդս կը փութայ ծանօթու-
թիւն տալ քաղաքիս Հայ գաղթա-
կանաց թէ վերջին փոստով Աղք-
Պատրիարքարանէ ստացած է մի
պաշտօնազիր, ըստ որում Հայ գաղ-
թականաց Կ. Պոլիս վերադարձն կար-
տօնուի Օսմանեան կառավարութեան
կողմանէ, մասնաւոր պայմաններու
ներքեւ եւ ինչ ինչ ձեւակերպու-
թեամբ, այս մասին Խորհուրդս
պատրաստ է իրեն զիմուք ընդհի-
րուն պէտք եղած բացատրութիւնները
տալ որպէս զի որ եւ է գծուարու-
թեանց չը բաղխին:

Ի զիմաց Թաղ. Խորհուրդս
Վ. Ասինազարի Ասինապետ
Մ. Սիլիստեան Մ. Տ. Միւնասեան
Վառնա 13 Մարտ 1898

ՊՕՐՍԱ

Վառնա 14 Մարտ

ՊՈՒՂՏԱՅ
Վալօն, լիպրա 47—51, հէքթօլ.
8.20—8.80 ֆրանք
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ.
8.50—11 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 38—40 հէքթօլ 4.40—5
ֆրանք

ՄԸՍԸՐ
Վալօն, լիպրա 37—38 հէքթօլ.
6.10—6.20 ֆրանք
Արապա, լիպրա 57—60 հէքթօլ.
6.30—6.60 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵԱ
100 օգգասը 19—25 ֆրանք՝ մալա
կէօրէ
Առապա մուամէլէսի՝ նարօլէն 21
ֆրանք հիսապը իլէ տիր.
Իւնտէ 2—3 վալօն վէ 30—40 ա-
րապա պուլտայ, 10—15 արապա ար-
բա, 4—5 վալօն վէ 7—8 արապա
մըսըր կէլմէքտէ տիր:

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն
Հայ Գաղթականութեան Ի Հնդկաստան
Հնդկաստանի հայ գաղութի մասին
պատմական եւ ազգագրական խիստ
շահեկան տեղեկութիւններ պարու-
նակող սոյն անգլիերէն երկասիրու-
թիւնը, զոր հեղինակը, Տիար Մեա-
րովպ Սէթիանց՝ Կալիֆաթայէն զրկած
է մեզ, կարծէ որ ամէն անգլիագէտ
ազգայիններու թանգարանին մէջ
գտնուի:

ԳԻՆ 6 ՇԻԼԻՆ
Կեղրնատեղի Վառնա Ապալուրահ-
ման մղկիթի գէմը, Ա. Չարպահնէլեան
Հայկական Գրատան մէջ:

ՏՊԱՐԱՆ «ՆԱՐԺՈՒՄ»Ի
Կը տպագրուին ամէն լեզուէ
այցետոմս, հասցեատոմս, նամա-
կագլուխ, հարսանեկան հրաւի-
րագիր, մահազգ, ինչպէս նաև
պրօշիւններ:
Գիններն յոյժ գլխաւանտչելի:
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշգու-
թեամբ եւ փութով կը կատար-
ուին:

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»
Վառնաի մէջ կը վաճառուի Մու-
սալա, թահիլ կէղիպէօյիւքիանի
խանութը, Սասուն սրճարանի ծխա-
վաճառին քով եւ Ապալուրահման
մղկիթի գէմը հայկական գրատու-
նը, Ա. Չարպահնէլեանի քով:

Отговорникъ: X. Тахмисянъ
Печатница «Взаимность» Варна.